



Կալիֆորնիայի Պաշտպանության և Փաստաբանության
համակարգ
Անվճար հեռախոսահամար (800) 776-5746

Սոցիալական ապահովության նպաստառուների պաշտպանություն և աջակցություն (PABSS, Protection and Advocacy for Beneficiaries of Social Security)

Մայիս, 2013թ., հրատ. #5430.10 - Armenian

PABSS ծրագրի նպատակը

PABSS ծրագրի նպատակն է (SSI, Supplemental Security Income) և (SSDI, Social Security Disability Insurance) նպաստառուներին տեղեկատվություն և խորհրդատվություն տրամադրել՝ մասնագիտական վերականգնողական և զբաղվածության այլ ծառայություններ ձեռք բերելու համար:

PABSS ծրագիրը նաև պահանջվում է՝ շահերի պաշտպանություն և այլ ծառայություններ տրամադրել, որոնց կարիքն ունի նպաստառուն՝ շահավետ աշխատանք ապահովելու կամ վերաշահելու համար:

PABSS ծրագրի առաջնահերթությունները

1. Հետաքննել և վերանայել անհարմար կամ անհամապատասխան ծառայության որևէ բողոք, որը տրամադրվել է հաշմանդամ նպաստառուին՝ ծառայության մատակարարի, աշխատակցի կամ այլ միավորման կողմից,

ովքեր նպաստում են հաշմանդամի աշխատանքի վերադառնալու ջանքերին:

2. Տեղեկատվություն և ուղեգրեր տրամադրել սոցիալական ապահովության հաշմանդամ նպաստառուներին աշխատանքի դրդապատճառների և զբաղվածության մասին, այդ թվում՝ տեղեկություններ ծառայությունների տեսակների և աջակցության վերաբերյալ, որոնք կարող են մատչելի լինել աջակցելու նրանց՝ շահավետ աշխատանք ապահովելու և վերագտնելու, հատկապես այն ծառայությունները և աջակցությունը, որոնք մատչելի են Աշխատանքային ցանցերի (en, Employment Networks) միջոցով՝ «Ticket to Work and Self-Sufficiency» ծրագրի ներքո:
3. Տեղեկատվություն և տեխնիկական աջակցություն տրամադրել հաշմանդամ շահառուների աշխատանքի դրդապատճառների վերաբերյալ:
4. Խորհրդակցություն տրամադրել և հաշմանդամ մարդկանց անունից օրինական ներկայացուցչությամբ հանդես գալ աշխատանքի վերադառնալուն առնչվող հարցերում, որտեղ նման ծառայություններն անհրաժեշտ են դառնում նման շահառուների իրավունքները պաշտպանելու համար:
5. Աջակցել հաշմանդամ շահառուներին նախքան (SSA, Social Security Administration) բանավեճերը, որոնք ներառում են աշխատանքին առնչվող ծրագրային որոշումներ:
6. Տեղեկատվություն և տեխնիկական աջակցություն տրամադրել պետական գործակալություններին, աշխատանքային ցանցերին (en) և այլ ծառայություն մատուցողներին ու շահերի պաշտպանության կազմակերպություններին:
7. Շահերի պաշտպանությամբ զբաղվել՝ հայտնաբերելու և շտկելու այն թերությունները, որոնք առկա են այն միավորումներում, որոնք մասնագիտական վերականգնողական, զբաղվածության և այլ աջակցության ծառայություններ են տրամադրում հաշմանդամ նպաստառուներին:

Ո՞վ է իրավունակ մասնակցել PABSS ծրագրին:

PABSS իրավունակ լինելու համար Դուք պետք է ԼԻՆԵՔ՝

1. 14 տարեկանը լրացածից մինչև 65 տարեկան
2. Ներկա պահին SSI, SSDI կամ միաժամանակ իրավունակ (պետք է կանխիկ վճարումներ ստացող լինի):
3. Հաշմանդամության պատճառով նախկինում SSI/SSDI կանխիկ նպաստներ ստացած:
4. Այժմ «MediCal» և/կամ 1619B կամ «Medicare» ստացող, այդ թվում՝ «Medicare Part D»:
5. Խնդիրը պետք է ՉԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆԸ/ԱՇԽԱՏԱՆՔԻՆ առնչվի:

SSA-ը վերանայել է հետևյալ հրապարակումը՝ միայն տեխնիկական ճշգրտության համար. Սակայն, սա պետք չէ համարել SSA-ի պաշտոնական փաստաթուղթ:

Disability Rights California-ն ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկի համար այցելե՛ք՝

*[http://www.disabilityrightsca.org/
Documents/ListofGrantsAndContracts.html](http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html).*